ԱՄՓՈՓ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Courtesy of USCIS History Office and Library

ՔԱՅԼ ՎԵՑԵՐՈՐԴ: Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակիցը պայմանների բավարարման որոշում է կայացնում և Ապաստանի հարցերով գրասենյակի վերահսկող աշխատակիցը վերանայում է որոշումը

Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակիցը որոշում է, արդյո՞ք դիմորդը համապատասխանում է ՆԱՕ-ի § 101(a)(42)(A)-ի մեջ փախստականի սահմանմանը, և արդյո՞ք կիրառելի է ըստ ՆԱՕ-ի § 208(b)(2)-ի ապաստանի իրավունք տրամադրելի իրավական արգելքը: Ապաստանի հարցերով գրասենյակի վերահսկող աշխատակիցը վերանայում է Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակցի եզրակացությունը՝ որոշելու համար, թե արդյո՞ք այն համապատասխանում է օրենքին:

ՔԱՅԼ ՅՈԹԵՐՈՐԴ: Դիմորդն ստանում է որոշումը

Դեպքերի մեծամասնությունում դիմորդը վերադառնում է ապաստանի հարցերով գրասենյակ որոշումը վերցնելու հարցազրույցն անցնելուց 2 շաբաթ անց: Դիմորդը, որպես կանոն, ստանում է որոշումը փաստաթղթերը հանձնելուց 60 օր անց: Այնուամենայնիվ, գործի վերաբերյալ որոշումները կարող են հետաձգվել անավարտ անվտանգության կամ կենսագրական ստուգումների պատճառով: Գործընթացի համար ավելի երկար ժամանակ կարող է պահանջվել նաև այն դիմորդի համար, ով ներկայումս օրինական կարգավիճակում է, հարցազրույց է ունեցել տարածքային գրասենյակում, կամ ու գործը վերանայվում է Ապաստանի հարցերով գլխավոր գրասենյակի անձնակազմի կողմից: Այս իրավիճակներում որոշումը սովորաբար փոստով ուղարկվում է դիմորդին:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ



Դուք իրավունք ունեք ապահովել Ձեր սեփական իրավական ներկայացումն ապաստան ստանալու հարցազրույցին՝ առանց որևէ վճարի Միացյալ Նահանգների կառավարությանը: Դուք կարող եք ունենալ հասարակական (անվճար կամ իջեցված վճարով) իրավաբանների կամ հասարակական, շահույթ չհետապնդող կազմակերպությունների ցանկ որոնք կարող են օգտակար լինել Ձեզ՝ աջակցելու համար

- Ուսումնասիրելով մեր կայքը, որը տեղեկություն է տրամադրում անվճար իրավական խորհրդի վերաբերյալ:
- Զանգահարելով Ձեզերի հարցման գծի հեռախոսահամարով՝ **1-800-870-3676:**
- Այցելելով Միացյալ Նահանգների Ներգաղթման հարցերով Արդարադատության գործադիր գրասենյակ: Տե՛ս կայքը **http://www.usdoj.gov/eoir**.
- Կապվելով ապաստանի հարերով գրասենյակի կամ Ձեր տան մոտ գտնվող տարածքային գրասենեկայի հետ:

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ներկայացուցիչները (UNHCR) կարող են աջակցել Ձեզ գտնել այն անձանց, ովքեր կօգնեն Ձեզ լրացնել I-589 Ձևը: UNHCR-ի հետ կապվելու համար զանգահարե՛ք **(202) 296-5191** կամ այցելեք **http://www.unhcr.org**:

Այս գրքույկում քննարկված թեմաների մասին լրացուցիչ տեղեկության համար խնդրում ենք այցելել՝

http://www.uscis.gov/asylum կամ զանգահարել՝ 1-800-375-5283

M-756 (09/2012) N

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ • ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ • ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐԸ



ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԳԱՂԹՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ(USCIS) ԱՊԱՍՏԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԾՐԱԳԻՐ

Ապաստան ստանալու ապագա դիմորդների Տեղեկատվական ուղեցույց

U.S. Citizenship and Immigration Services

ԱՊԱՍՏԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Ամեն տարի մարդիկ գալիս են Միացյալ Նահանգներ՝ փնտրելով պաշտպանություն, քանի որ նրանք ենթարկվում են հալածանքի, կամ վախ ունեն, որ կենթարկվեն հալածանքի իրենց ռասայի, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական կարծիքի պատճառով: Անձանց, ովքեր համապատասխանում են ապաստան ստանալու պայմաններին, կարող է թույլատրվել մնալ Միացյալ Նահանգներում:

Ի՞նչ է ապաստանը:

Ապաստանը հալածանքների ենթարկման վախ ներշնչող երկիր տեղափոխվելուց պաշտպանության մի ձև է, որը թույլ է տալիս պայմաններին բավարարող փախստականին մնալ Միացյալ Նահանգներում և ի վերջո դառնալ օրինական մշտական բնակիչ:

Ո՞վ կարող է դիմել ապաստանի համար:

ԱՄՆ քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր ներկայումս ապրում են ԱՄՆ-ում կամ հասել են ԱՄՆ, անկախ նրանից՝ մուտքի թույլտվություն ունեն, թե ոչ, կարող են դիմել:

Ես ե՞րբ պետք է դիմեմ ապաստանի համար:

Որպես կանոն Դուք պետք է դիմեք ապաստանի համար Միացյալ Նահանգներ Ձեր վերջին ժամանման պահից հաշված մեկ տարվա ընթացքում: Հնարավոր են բացառություններ, ինչպես օրինակ՝ (1) Ձեր հայրենիքում փոփոխված հանգամանքներ, որոնք ազդում են ապաստան ստանալու համար Ձեր համապատասխանության վրա, կամ (2) արտակարգ հանգամանքներ՝ կապված դիմումը լրացնելու Ձեր ուշացման հետ:

Կարո՞ղ եմ դիմել ապաստան ստանալու համար, եթե ես անօրինական եմ այստեղ գտնվում:

Այո: Դուք կարող եք դիմել՝ անկախ ներգաղթման Ձեր կարգավիճակից, եթե ներկայացնում եք Ձեր դիմումը Ձեր վերջին ժամանումից մեկ տարվա ընթացքում, կամ ապացուցում եք, որ բավարարում եք այդ կանոնի բացառության պայմանին:

Կարո՞ղ եմ դիմել, եթե ես դատապարտված եմ եղել հանցանքի համար:

Այո: Սակայն, Ձեզ կարող են արգելել ապաստան ստանալու իրավունքից՝ կախված հանցանքի տեսակից:

Կարո՞ղ եմ ես զրկվել ապաստանի համար դիմելու կամ ապաստան ստանալու իրավունքից:

Դուք կարող եք զրկվել ապաստանի համար դիմելուց, եթե նախկինում դիմել եք ապաստանի համար և մերժվել եք ներգաղթման դատավորի կամ Ներգաղթման բողոքարկումների հանձնաժողովի կողմից, եթե չեք դիմել Ձեր վերջին ժամանման պահից մեկ տարվա ընթացքում, կամ եթե կարող եք տեղափոխվել՝ ապահով երրորդ երկիր՝ երկկողմանի կամ բազմակողմանի պայմանագրի համաձայն: Ձեզ կարող են զրկել ապաստան ստանալու իրավունքից՝ որոշակի հանցավոր գործունեության պատճառով, անվտանգությանն առնչվող հիմքերով, կամ եթե Դուք ներգրավված եք այլոց հալածելու գործում, կամ եթե արդեն հիմնավոր բնակություն եք հաստատել այլ երկրում: Որոշակի բացառություններ կարող են կիրառվել: Եթե Ձեզ արգելված է դիմել ապաստանի համար, այնուամենայնիվ, Ձեզ, միևնույն է, կարող է ընձեռվել վտարումը հետաձգելու իրավունք՝ պաշտպանության մեկ այլ՝ ավելի սահմանափակ ձև, որ կարող է տրամադրվել վտարման գործընթացում:

ԱՊԱՍՏԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

ԱՊԱՍՏԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ինչպե՞ս պետք է դիմեմ ապաստան ստանալու համար:
Ապաստանի դիմելու համար Դուք պետք է լրացնեք **I-589** Ձևը՝ Ապաստան ստանալու և վտարումը հետաձգելու դիմում, և ուշադիր հետևեք հրահանգներին: Ձևերը կարող եք գտնել **http://www.uscis.gov/forms** կայքում, ինչպես նաև զանգահարելով Ձևերի հարցման գծով՝ **1-800-870-3676**:

Որքա՞ն է ապաստանի դիմելու վճարը:
ԱՊաստանի դիմելու համար չկա որևէ վճար:

Կարո՞ղ եմ ընդգրկել ամուսնուս և երեխաներիս իմ դիմումի մեջ:
Ձեր ամուսինը և երեխաները, ովքեր գտնվում են Միացյալ Նահանգներում, կարող են ընդգրկվել Ձեր դիմումի մեջ՝ գործը ներկայացնելու պահին կամ ցանկացած ժամանակ՝ մինչև Ձեր գործի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը: Երեխան պետք է լինի 21 տարեկանից փոքր և չամուսնացած՝ Ձեր դիմումի մեջ որպես խնամքի տակ գտնող անձ ընդգրկվելու համար: Դուք պետք է Ձեզ հետ բերեք խնամքի տակ գտնվող այս անձանց ապաստանի համար Ձեր հարցազրույցին:

Արդյո՞ք ես ենթակա եմ անվտանգության և կենսագրական տվյալների ստուգումների, եթե դիմեմ ապաստանի համար:
Այո: Ապաստանի համար դիմող յուրաքանչյուր անհատ ենթակա է կենսագրական տվյալների և անվտանգության ստուգումների: Այս ստուգումների արդյունքների կախված՝Ձեզ կարող են ճանաչել ոչ պիտանի ապաստան ստանալու համար:

Կվերցնե՞ն արդյոք իմ մատնահետքերը, եթե դիմեմ ապաստանի համար:
Այո: Ապաստանի Ձեր դիմումը ներկայացնելուց հետո, Դուք փոստով կստանաք ծանուցում, որտեղ նշված կլինեն Դիմումի աջակցման կենտրոնում Ձեր մատնահետքը տալու օրը և ժամը:

Կարո՞ղ եմ աշխատել ապաստան ստանալու համար դիմելուց հետո:
Դուք չեք կարող դիմել աշխատանքի թույլտվության համար ապաստան ստանալու դիմումի հետ միաժամանակ: Այնուամենայնիվ, Դուք կարող եք դիմել աշխատանքի թույլտվության համար, եթե ապաստան ստանալու Ձեր ամբողջական դիմումը ներկայացնելուց անցել է 150 օր, բացառությամբ Ձեր պատճառով առաջացած ցանկացած ուշացման, բայց Ձեր դիմումի վերաբերյալ որոշում չի կայացվել: Բացի այդ, եթե Դուք ստանաք ապաստանի իրավունք, Ձեզ կթույլատրվի աշխատել սկսած այն պահից, երբ Ձեր ապաստանի գործը հաստատվի:



Excerpts from the sonnet, "The New Colossus," written by Emma Lazarus in 1883. A bronze plaque of the inspiring poem was placed on the inner walls of the Statute of Liberty's pedestal in 1903.

Կարո՞ղ եմ ճանապարհորդել Միացյալ Նահանգների դուրս ապաստան ստանալու համար դիմում ներկայացնելուց հետո
Եթե Դուք պետք է ճանապարհորդեք Միացյալ Նահանգներից դուրս մինչ ապաստան ստանալու Ձեր գործի վերաբերյալ վերջնական որոշումը, Միացյալ Նահանգները լքելուց առաջ Դուք նախապես պետք է ստանաք թույլտվություն, որը նաև կոչվում է Կանխավ արձակում, վերադառնալու պայմանով: Եթե Դուք ձեռք չբերեք Կանխավ արձակումը, USCIS-ը կհամարի, որ Դուք հրաժարվել եք Ձեր դիմումի և Ձեզ կարող են մերժել կրկին ընդունել Միացյալ Նահանգներ: Բացի այդ, եթե Դուք ստանաք Կանխավ արձակում և վերադառնաք հալածանքների վախ ներշնչող երկիր, USCIS-ը կարող է որոշել, որ Դուք հրաժարվել ապաստան ստանալու Ձեր դիմումից, քանի դեռ չեք տրամադրել Ձեր վերադարձի համար համոզիչ պատճառներ:

Կարո՞ղ է որևէ մեկն օգնել ինձ ապաստան ստանալու հարցազրույցի գործում:
Ապաստան ստանալու հարցազրույցին Դուք կարող եք ներկայանալ Ձեր անձնական փաստաբանի կամ օրինական ներկայացուցչի հետ առանց որևէ վճարի ԱՄՆ-ի կառավարությանը:

Ինչպե՞ս է անցկացվելու հարցազրույցն ինձ հետ, եթե ես չեմ խոսում անգլերեն:
Հարցազրույցը Ձեզ հետ կանցկացվի թարգմանչի օգնությամբ: USCIS-ը թարգմանիչներ չի տրամադրում: Դուք պետք է ներկայանաք հարցազրույցին Ձեր անձնական թարգմանչի հետ: Եթե Ձեր թարգմանիչը բավարար կերպով չի խոսում անգլերեն, ապա հարցազրույցը Ձեզ հետ կարող է հետաձգվել, որպեսզի Դուք կարողանաք գտնել ավելի բանիմաց թարգմանչի:

Ի՞նչ է տեղի ունենալու ապաստան ստանալու իմ հարցազրույցի ժամանակ:
Դուք գալու եք ապաստանի հարցերով գրասենյակ, որտեղ ունենալու եք ոչ մրցակցային հարցազրույց գրասենյակի աշխատակցի հետ, ով կստուգի Ձեր ինքնությունը և կտա Ձեզ հիմնական կենսագրական հարցեր, ինչպես նաև կհարցնի ապաստանի համար դիմելու պատճառների մասին: Հարցազրույցի ընթացքում ասված ցանկացած բան գաղտնի է մնում: Շատ կարևոր է, որ Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակցին պատմեք Ձեր փոքրաքանակությունների մասին որքան հնարավոր է մանրամասնորեն, որպեսզի աշխատակիցը կարողանա որոշել, թե արդյո՞ք Դուք որակավորվում եք փախստական: Ձեր գործի վերաբերյալ որոշումը չի կայացվի ապաստան ստանալու հարցազրույցի օրը:

Ինչպե՞ս է Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակիցը որոշում, թե արդյոք ես համապատասխանում եմ ապաստան պահանջելու պայմաններին:
Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակիցը կորոշի Ձեր համապատասխանությունը՝ գնահատելով փախստականի սահմանմանը Ձեր համապատասխանությանը և արդյոք Դուք զրկված չեք ապաստան ստանալու իրավունքից՝ հիմնվելով Ձեր դիմումի մեջ նշված և Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակցի հետ հարցազրույցի ընթացքում ստացված տեղեկության, ինչպես նաև այլ տեղեկության վրա, որ կարող է հասանելի լինել աշխատակցին:

Ի՞նչ տեղի կունենա, եթե որոշում կայացվի, որ ես չեմ բավարարում ապաստան ստանալու պայմաններին:
Եթե Դուք ապաստան ստանալու իրավունքից զրկված ճանաչվեք, սակայն ունենաք վավեր ներգաղթման կարգավիճակ կամ համապատասխանում եք ԱՄՆ-ում մնալու պայմաններին (Ժամանակավոր պաշտպանված կարգավիճակի, կամ, որոշ դեպքերում, ԱՄՆ ժամանելու և մեկնելու իրավունքի հիման վրա) Դուք կստանաք Ձեր դեպքի մերժման մտադրության մասին ծանուցում, որը բացահայտում է պատճառները, թե ինչու Դուք ապաստան ստանալու իրավունք չունեք: Դուք հնարավորություն կունենաք հերքելու այս պատճառները և տրամադրելու լրացուցիչ փաստեր՝ պաշտպանելու Ձեր գործը: Եթե Դուք չունեք վավեր ներգաղթման կարգավիճակ, կամ չեք որակավորվել ԱՄՆ-ում մնալու համար, ապա Դուք կհայտնվեք հեռացման գործընթացում և Ձեր գործը կփոխանցվի ներգաղթման հարցերով դատավորին, որը կրկնակի կգնահատի ապաստան ստանալու մասին Ձեր դիմումը:

Ինչպե՞ս կարող եմ տեղեկանալ իմ գործի կարգավիճակի մասին:
Խնդրում ենք կապվել USCIS-ի Ապաստան ստանալու հարցերով գրասենյակի հետ, որն անցկացրել է կամ անցկացնելու է ապաստան ստանալու Ձեր հարցազրույցը:

Որտե՞ղ կարող եմ գտնել օրենքը:
Ապաստանի համար իրավական հիմքերը ներկայացված են Ներգաղթման և ազգության մասին օրենքի (ՆԱՕ) 208 հոդվածում: Դաշնային օրենքները, որոնք բացահայտում են ապաստան ստանալու համար պահանջների բավարարման պայմանները և ընթացակարգերը, կարող եք գտնել Դաշնային օրենքների օրենսգրքում (CFR)-ի 8 CFR § 208-ում:

ՔԱՅԼ ԱՌԱՋԻՆ: Ապաստան փնտրողը ժամանում է Միացյալ Նահանգներ
Ապաստան փնտրողը որպես կանոն իրավունք ունի դիմել ապաստանի համար ՆԱՕ-ի § 208(a)-ի հիման վրա, եթե նա 1) ժամանում է կամ ֆիզիկապես գտնվում Միացյալ Նահանգներում, և 2) ներկայացնում է փաստաթղթերը ԱՄՆ ժամանելուց հետո մեկ տարվա ընթացքում, կամապացուցում, որ մեկ տարվա ընթացքում փաստաթղթերը ներկայացնելու պահանջի հարցում բացառությունը կիրառելի է:

ՔԱՅԼ ԵՐԿՐՈՐԴ: Ապաստան փնտրողը դիմում է ապաստանի համար
Ապաստան փնտրողը ներկայացնում է **I-589** ձևը՝ Ապաստան ստանալու և վտարումը հետաձգելու դիմում՝ համապատասխան Սպասարկման կենտրոն:

ՔԱՅԼ ԵՐՐՈՐԴ: Դիմորդից վերցվում են մատնահետքեր և անցկացվում կենսագրական ստուգումներ՝ անվտանգության նկատառումներով:
13 տարեկան և ավելի բարձր տարիքի դիմորդները՝ Սպասարկման կենտրոնից ստանում են ծանուցում՝ այցելելու Դիմումների աջակցման կենտրոն կամ լիազորված Օրենքի կատարում ապահովող պաշտոնական գործակալություն, որտեղ կվերցվեն իրենց մատնահետքերը:

ՔԱՅԼ ՉՈՐՐՈՐԴ: Դիմորդն ստանում է հարցազրույցի ծանուցում
Դեպքերի մեծամասնությունում դիմորդն ստանում է ծանուցում, որտեղ նշված են ապաստան ստանալու հարցազրույցի ամսաթիվը, վայրը և ժամանակը՝ դիմորդի կողմից ամբողջական I-589 ձևը ներկայացնելուց հետո 21 օրվա ընթացքում:

ՔԱՅԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ: Դիմորդի հետ անկացվում է հարցազրույց
Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակիցն անց է կացնում հարցազրույց դիմորդի հետ ապաստանի հարցերով զբաղվող ութ գրասենյակներից մեկում, որոնք գտնվում են Առլինգթոնում՝ Վանքուվեր, Չիկագոյում՝ Իլինոյս, Հյուսթոնում՝ Տեխաս, Լոս Անգելեսում՝ Կալիֆորնիա, Մայամիում՝ Ֆլորիդա, Նյուարկում (Լիսինոռսթ)՝ Նյու Ջերսի, Նյու Յորքում (Ռոուզդեյլ) Նյու Յորք, և Սան Ֆրանցիսկոյում՝ Կալիֆորնիա, կամ, եթե դիմորդը շատ հեռու է բնակվում ապաստանի հարցերով զբաղվող գրասենյակից, ապա տարածքային գրասենյակում: Դեպքերի մեծամասնությունում դիմորդի հետ անց է կացվում հարցազրույց՝ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 43 օրվա ընթացքում, սակայն այն անձանց համար, ովքեր հարցազրույց են անցնում տարածքային գրասենյակում, ժամանակի սահմանները կարող են ավելի երկար լինել, որովհետև Ապաստանի հարցերով զբաղվող գրասենյակի աշխատակիցները պետք է կազմակերպեն իրենց ուղևորությունն այդ գրասենյակներ: